Առաջարկություններ
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և Մարդու իրավունքների ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի 70-րդ կետի կատարման վերաբերյալ
(անգործունակության ինստիտուտ)

1. Ներածություն

2015 թ. ապրիլ ամսին ՀՀ ԱԺ պատգամավորներ Վահրամ Բաղդասարյանի, Սամվել Ֆարմանյանի, Խոսրով Հարությունյանի, Էդուարդ Շարմազանովի, Արփինե Հովհաննիսյանի, Մարգարիտ Եսայանի կողմից՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ[1]:

2015 թ. ապրիլի 27-ին ՀՀ ԱԺ կողմից որոշվել է հետաձգել նախագծի՝ նստաշրջանի օրակարգ ընդգրկվելը մինչեւ մեկ տարով:

Սույն առաջարկության նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության տրվել է եզրակացություն:

Եզրակացությամբ առաջարկվել է որոշակի լրացումներ կատարել Նախագծի մեջ, որի դեպքում ՀՀ կառավարությունը նախագիծն ընդունելի կհամարի:

ՀՀ կառավարության կողմից մասնավորապես ներկայացվել են հետևյալ առաջարկությունները.

1. անգործունակ ճանաչված անձի գործունակությունը վերականգնելու համար, բացի անձամբ և փաստաբանի միջոցով դատարան դիմելու իրավունքից, հնարավորություն նախատեսել ընտրելու այն անձին, ով նման հարցով կդիմի դատարան,

2. նախատեսել տվյալ անձի համար «որոշումների կայացմանը աջակցող» սուբյեկտների ցանկ, ինչը սահմանափակված չի լինի միայն տվյալ անձի ընտանիքի անդամներով,

3. հաշվի առնել դատարանների ծանրաբեռնվածությունը և մշակել որոշակի մեխանիզմներ, բազմաքանակ անհիմն դիմումներից խուսափելու համար,

[1] Թիվ Պ-732-05.03.2015-ՊԻ-010/0 նախագիծ՝ http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=36991

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

4. կարգավորել, թե ինչ ընթացակարգով և ինչ չափանիշների հիման վրա է որոշվելու՝ արդյոք անձի մասնակցությունը դատական նիստին վտանգ է ներկայացնում քաղաքացու կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար, թե՝ ոչ, և ինչպիսի գնահատողական մեխանիզմ է կիրառում դատավորն անձի մասնակցության անհրաժեշտությունը հիմնավորելու համար,

5. կարգավորել դիմումների ներկայացման և քննության ընթացակարգեր՝ խուսափելու համար անգործունակ ճանաչված անձի խնամակալների և բժիշկների լիազորությունների չարաշահումից:

ՀՀ կառավարության կողմից 2014 թ. մարտի 27 թիվ 303-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրով որպես գործողություն է սահմանված՝

70. Հստակեցնել հոգեկան առողջության և (կամ) մտավոր խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքերը և մշակել անգործունակության գնահատման տարբերակված չափանիշներ[2]:

Միջոցառման իրականացումը նախատեսված է 2015 թ. առաջին եռամսյակում:

Անձի օրենքի առջև հավասարության սկզբունքի կիրառման և անգործունակության ինստիտուտի ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ բազմիցս իր դիրքորոշումն է հայտնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեն (ՀՈՒԱԻ կոմիտեն), Մարդու իրավունքների եվրոպական դատարանը[3], ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարը[4], վերջին տարիներին մի շարք վերլուծություններ են կատարվել ներպետական մակարդակում[5]:

Սույն փաստաթուղթը նպատակ չունի կրկնել վերոնշյալ, ներառյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի ուսումնասիրությունը և վերլուծությունները, այլ նպատակ ունի

[2] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=92644
[3] Case of Ivinović v. Croatia, Application no. 13006/13, 18 September 2014
http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-146393
Case of Stanev v. Bulgaria, Application no. 36760/06, 17 January 2012
http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-108690
Case of Shtukaturov v. Russia, Application no. 44009/05, 27 March 2008
http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-85611
և այլն:
[4] «Who gets to decide? Right to legal capacity for persons with intellectual and psychosocial» disabilities
https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1908555
[5] «The right of persons with mental disorders to liberty, a fair trial and private life in the Armenian law and practice»
http://hra.am/i/up/pmdENGFINALweb.pdf
Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը ՀՀ-ում
http://www.osf.am/wp-content/uploads/2015/04/Araks_melqonyan-policy_paper.pdf
Չափահաս անձին անգործունակ ճանաչելու և խնամակալ նշանակելու վերաբերյալ ՀՀ օրենսդրական կարգավորումները չեն համապատասխանում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային
http://hcav.am/events/26-05-2014/
Legal capacity in Europe, MDAC
http://mdac.info/sites/mdac.info/files/legal_capacity_in_europe.pdf

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

արձանագրել և ընդգծել այն հիմնական և կարևոր փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է կատարել ՀՀ-ում իրենց կյանքի ընթացքում որոշում կայացնելու հարցում խոչընդոտներ ունեցող անձանց համար աջակցություն ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով, որ տվյալ ոլորտում մասնագիտացված մարմինը՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն, 2014 թ. մայիսի 19-ին հրապարակել է խնդրի առարկա իրավունքի վերաբերյալ մեկնաբանություններ՝ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանություններ[6], սույն առաջարկությունները կազմվել են մեծապես հիմք ընդունելով տվյալ փաստաթուղթը:

2. Առաջարկությունների հիմքում դրված հիմնական սկզբունքները

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա

Հոդված 3 Ընդհանուր սկզբունքները

Սույն Կոնվենցիայի սկզբունքներն են.

ա. հարգանք արժանապատվության, անհատի ինքնուրույնության, ազատ ընտրության և անձի անկախության իրավունքի նկատմամբ.

բ. խտրականության բացառում.

գ. հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներգրավվածություն.

դ. հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելը,

ե. հնարավորությունների հավասարություն.

զ. մատչելիություն.

է. հավասարություն տղամարդկանց և կանանց միջև.

ը. հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների նկատմամբ և հարգանք հաշմանդամ երեխաների՝ իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա

Հոդված 12 Օրենքի առաջ հավասարությունը

[6] « General Comment No. Article 1. (2014) Article 12: Equal recognition before the law». CRPD Committee http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/031/20/PDF/G1403120.pdf?OpenElement

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

1. Մասնակից պետությունները վերահաստատում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամենուր ունեն իրավահավասար պաշտպանության իրավունք:

2. Մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով ունեն իրավունակություն[7] կյանքի բոլոր ոլորտներում:

3. Մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնեն այն աջակցությունը, որը կարող է պահանջվել նրանց իրավունակությունը[8] կիրառելիս:

4. Մասնակից պետություններն ապահովում են, որ իրավունակության կիրառմանն առնչվող միջոցներով սահմանվեն համապատասխան և արդյունավետ երաշխիքներ՝ կանխելու համար չարաշահումները՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն: Նման երաշխիքներն ապահովում են, որ իրավունակության կիրառմանն ուղղված միջոցներով հարգվեն անձի իրավունքները, կամքն ու նախասիրությունները, զերծ լինեն շահերի բախումից և չափից մեծ ազդեցությունից, համահունչ լինեն անհատի անձնական հանգամանքներին և մշակվեն դրանց համապատասխան, կիրառվեն հնարավորինս կարճ ժամկետներում և ենթարկվեն կանոնավոր վերահսկողության իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատական մարմնի կողմից: Այս երաշխիքները պետք է համահունչ լինեն այն ազդեցությանը, որ նման միջոցները գործում են անձի իրավունքների ու շահերի վրա:

5. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ ու արդյունավետ միջոցներ, որպեսզի ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքը իրենց սեփականությունը տնօրինելու կամ ժառանգելու, սեփական ֆինանսական գործարքները վերահսկելու և բանկային վարկերից, հիփոթեքից և ֆինանսական վարկավորման այլ միջոցներից օգտվելու համար, ինչպես նաև երաշխավորում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք կամայականորեն չեն զրկվի իրենց սեփականությունից:

***ՀՈՒԱՐ կոմիտեի թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն (2014)** Հոդված 12 Օրենքի առաջ հավասարությունը*

…Մարդու իրավունքների վրա հիմնված հաշմանդամության մոդելը նախատեսում է անցում անձի փոխարեն որոշումների կայացման պարադիգմից դեպի աջակցության միջոցով որոշումների կայացման պարադիգմ: (3-րդ կետ)

[7] Կոնվենցիայի պաշտոնական տարգմանության մեջ կիրառվում է «իրավունակություն» եզրույթը, սակայն Կոնվենցիայի իմաստով անհրաժեշտ է հասկանալ ըստ ՀՀ ներպետական օրենսդրության թե՛ իրավունակություն, թե՛ գործունակություն հասկացությունները:
[8] Տե՛ս նույնը

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Կոմիտեն վերահաստատում է, որ հաշմանդամություն (ներառյալ ֆիզիկական և զգայական խնդիրներ) ունեցող անձի՝ այդպիսին լինելու անձի կարգավիճակը երբեք չպետք է հիմք հանդիսանա նրան գործունակությունից կամ 12-րդ հոդվածով սահմանված որևէ այլ իրավունքից զրկելու համար: (9-րդ կետ)

Ֆունկցիոնալ մոտեցումը փորձում է գնահատել անձի գործունակությունը և հետևաբար զրկել գործունակությունից: Այն հաճախ հիմնված է այն ենթադրության վրա, թե արդյոք անձը կարող է հասկանալ իր որոշման բնույթը և հետևանքները կամ արդյոք նա կարող է օգտագործել և գնահատել համապատասխան տեղեկատվությունը: Այս մոտեցումը թյուր է 2 հիմնական պատճառներով: ա) այն խտրական է կիրառվում հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ, բ) այն առաջնորդվում է մարդու ուղեղի ներքին աշխատանքը ճշգրիտ գնահատելու հնարավորության կանխավարկածով, և երբ անձը հաջողությամբ չի անցնում համապատասխան գնահատումը, նա զրկվում է մարդու հիմնարար իրավունքից՝ օրենքի առջև հավասարության իրավունքից: Բոլոր մոտեցումների դեպքում անձի հաշմանդամությունը և/կամ որոշում կայացնելու հմտությունները ընդունվում են որպես իրավաչափ նպատակ իրեն գործունակությունից զրկելու և օրենքի առջև իր կարգավիճակը իջեցնելու համար: 12-րդ հոդվածը թույլ չի տալիս գործունակությունից զրկելու նման խտրական մոտեցում, այլ պահանջում է, որպեսզի գործունակությունը կիրարկելիս անձն ապահովվի աջակցությամբ: (17-րդ կետ)

Այն պահանջում է Անդամ պետություններից ստեղծել պատշաճ և արդյունավետ երաշխիքներ գործունակությունը իրացնելու համար: Այս երաշխիքների առաջնային նպատակը պետք է լինի ապահովել անձի իրավունքների, ցանկությունների և նախապատվությունների հանդեպ հարգանքը: (20-րդ կետ)

Այն դեպքում, երբ էական ջանքեր գործադրելուց հետո հնարավոր չէ պարզել անձի ցանկությունները և նախապատվությունները, «ցանկությունների և նախապատվությունների լավագույն մեկնաբանությունը» պետք է փոխարինի «լավագույն շահերը» սահմանմանը: (21-րդ կետ)

Անդամ պետությունների պարտավորությունը անձի փոխարեն որոշումների կայացման ռեժիմը փոխարինել աջակցման միջոցով որոշումների կայացման ռեժիմով պահանջում է և անձի փոխարեն որոշումների կայացման ռեժիմի վերացում և աջակցման միջոցով որոշումների կայացման այլընտրանքային մեխանիզմների զարգացում: Աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի զարգացումը անձի փոխարեն որոշումների կայացման մեխանիզմի պահպանման հետ զուգահեռ բավարար չէ Կոնվենցիայի 12-րդ հոդվածին համապատասխանելու համար: (28-րդ կետ)

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

3. Առաջարկություններ

անգործունակության ինստիտուտի վերացման անհրաժեշտությունը

Առաջարկություն

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել փոփոխություն: Վերացնել անգործունակության և սահմանափակ գործունակության ինստիտուտները, փոխարենը սահմանել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ:

Հիմնավորում

Անգործունակության ինստիտուտը ամբողջությամբ զրկում է անձին իր կյանքի վերաբերյալ որոշումների կայացման իրավունքից: Անգործունակ ճանաչվելու հետևանքով նա զրկվում է հասարակության լիարժեք անդամ, հասարակական և հանրային հարաբերությունների լիարժեք սուբյեկտ լինելու հնարավորությունից: Անձը հանրային հարաբերությունների լիարժեք սուբյեկտ հանդիսանալու փոխարեն դառնում է հարաբերությունների և այլոց որոշումներից կախում ունեցող՝ հանրային կյանքի, իրավական հարաբերությունների կարգավորման օբյեկտ:

ՀՀ-ում անգործունակության և, հետևաբար, խնամակալության ինստիտուտը[9] հիմնված է հետևյալ հիմնական սկզբունքի վրա՝ ապահովել անձի լավագույն շահը: ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (ՔՕ) 34-րդ հոդվածով սահմանված է՝ խնամակալները խնամարկյալների ներկայացուցիչներն են օրենքի ուժով և նրանց անունից ու ի շահ նրանց կնքում են բոլոր անհրաժեշտ գործարքները: Ըստ ՔՕ 38-րդ հոդվածի 3-րդ մասի՝ խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են հոգալ իրենց խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը: Խնամակալի կողմից անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սկզբունքից է բխում անձի փոխարեն որոշումների կայացման մեխանիզմը, որի դեպքում անձի կարծիքը հաշվի առնելը չի հանդիսանում պարտադիր պայման:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված են որոշակի երաշխիքներ իր իրավունքների իրացման ընթացքում մասնակցությունն ապահովելու համար, սակայն այդ երաշխիքները չափազանց սահմանափակ են և ավելին, այդ միջոցների կիրառումն ինքնին կախված է այլ անձանց հայեցողությունից: Այսպես, օրինակ, 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ խնամարկյալ քաղաքացու եկամուտները՝ ներառյալ խնամարկյալին իր գույքի կառավարումից հասանելիք եկամուտները, բացառությամբ այն եկամուտների,

[9] Սույն փաստաթղթի մեջ խնամակալություն ինստիտուտը օգտագործվում է միայն չափահաս անձի նկատմամբ խնամակալության նշանակման համատեքստում:

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

որոնք խնամարկյալը կարող է տնօրինել ինքնուրույն, խնամակալը կամ հոգաբարձուն ծախսում են միայն ի շահ խնամարկյալի՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվությամբ: Տվյալ դեպքում պարզ չէ, թե ինչպե՞ս է որոշվում, թե որ եկամուտները կարող է տնօրինել խնամարկյալը ինքնուրույն և ո՞վ է դա որոշում:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված անգործունակության և խնամակալության ինստիտուտը խնդրահարույց է՝ ելնելով անձի արժանապատվության, օրենքի առջև հավասարության և անձի մի շարք այլ հիմնարար իրավունքներից ու ազատություններից բխող հիմնարար սկզբունքներից: ՀՀ Սահմանադրական դատարանը, իր՝ 2015 թ. ապրիլի 7-ի թիվ ՍԴՈ-1197 որոշմամբ ևս անդրադառնալով ՀՀ-ում անգործունակության ինստիտուտին, արձանագրել է, որ հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում համապատասխան անդրադարձ պետք է լինի նաև այս խնդրին, ինչը թույլ կտա բացառել անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները՝ առավել ամբողջական դարձնելով անձին «անգործունակ» կամ «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում անձի անգործունակության ճանաչման և վերացման վերաբերյալ երաշխիքների սահմանումը բավարար չէ ՀՀ-ում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու և ավելին, ՀՀ-ում մարդու իրավունքների ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի 70-րդ կետի կատարումն ապահովելու համար, այն է՝ հստակեցնել հոգեկան առողջության և (կամ) մտավոր խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքերը և մշակել անգործունակության գնահատման տարբերակված չափանիշներ:

խոցելի վիճակում գտնվող անձի իրավունքների իրացման, օրինական շահերի պաշտպանությանը և պարտականությունների կատարմանն աջակցող մեխանիզմի անհրաժեշտություն (supported decision-making)

Առաջարկություն

2. Ապահովել հասարակության խոցելի խմբերի համար որոշումների կայացման ընթացքում ըստ անհրաժեշտության որոշումների կայացմանն աջակցելու հնարավորություն ընձեռող մեխանիզմներ: Ընդ որում այս մեխանիզմները պետք է հասանելի լինեն ոչ միայն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող այլ նաև այն անձանց համար, ում անհրաժեշտ է նման աջակցությունը, օրինակ՝ թմրամիջոց գործածող, ալկոհոլ

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

չարաշահող կամ ֆիզիոլոգիական հիվանդության հետևանքով, տարիքից ելնելով խոցելի վիճակում գտնվող, իրենց որոշումների կայացման և իրենց իրավունքների իրացման ընթացքում դժվարություններ ունեցող անձանց համար:

Հիմնավորում

Հասարակության որոշակի խմբերի համար, ելնելով իրենց ֆիզիկական, հոգեկան վիճակից և մտավոր ունակություններից կենսական նշանակություն ունի անհրաժեշտ աջակցությամբ ապահովումը:

Միջազգային իրավական ակտերի և մասնավորապես ՀՈՒԱԻ կոնվենցիայի պահանջների կատարման շրջանակներում ձևավորվել է աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի հասկացությունը: Աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմը կարելի է սահմանել որպես հարաբերությունների, գործելակերպի, միջոցառումների, համաձայնագրերի ամբողջություն, որոնք առավել կամ նվազ ֆորմալ և ինտենսիվ են և որոնք կազմված են հաշմանդամություն ունեցող անձին իր անձնական կյանքի վերաբերյալ իր կողմից որոշումներ կայացնելու կամ այլ անձանց որոշումներին մասնակցություն ունենալու նպատակով:[10] Ընդ որում անձի համար որոշումների կայացումը հասկանալի դարձնելու նպատակով անհրաժեշտ է նաև կիրառել խելամիտ հարմարություններ[11], իսկ աջակցությունը պետք է ներառի մի շարք միջոցառումներ, ներառելով ինչպես պետության կողմից նշանակված աջակցողների/պաշտպանների, այնպես էլ համայնքային, հավասարը հավասարին և այլ ոչ ֆորմալ աջակցության միջոցներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվում է անձի (1) անգործունակ ճանաչելու՝ խնամակալության, (2) գործունակության սահմանափակման՝ հոգաբարձության և (3) պատրոնաժի ինստիտուտները:

1) Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ անգործունակ է ճանաչվում միայն այն անձը, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Անձը անգործունակ կարող է ճանաչվել դատարանի կողմից (31-րդ հոդված): Խնամակալ նշանակվում է խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

2) Անձի գործունակությունը կարող է սահմանափակվել ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու արդյունքում: (հոդված 35) Անձի

[10] Dinerstein, Robert D. "Implementing Legal Capacity Under Article 12 of the UN Convention on the Rights of Persons with Disabilities: The Difficult Road From Guardianship to Supported Decision-Making." Human Rights Brief 19, no. 2 (2012): 8-12.
[11] http://www.amnesty.ie/reports/essential-principles-irish-legal-capacity-law, սկզբունք թիվ 4:

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

գործունակությունը սահմանափակվում է դատարանով: Հոգաբարձու նշանակվում է խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

3) Պատրոնաժ կարող է սահմանվել չափահաս գործունակ այն քաղաքացու խնդրանքով, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները: Պատրոնը նշանակվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տվյալ քաղաքացու համաձայնությամբ: (հոդված 43)

Այսպիսով, ՀՀ օրենսդրությունը նախատեսում է խոցելի իրավիճակում գտնվող անձանց համար իրենց իրավունքների իրացման և պարտավորությունների կատարմանն օժանդակող որոշակի մեխանիզմներ: Ընդ որում այս մեխանիզմները թիրախավորված են, յուրաքանչյուրը նախատեսված է կոնկրետ խումբ անձանց համար: Նման մոտեցումը անձանց և անձանց խմբերի (հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, թմրամիջոց գործածող անձինք և այլն) նկատմամբ հատուկ վերաբերմունքի արտացոլում է, ինչն իր հերթին խարանի և հետևաբար խտրական վերաբերմունքի պարարտ հող է ստեղծում: Այս մեխանիզմներից յուրաքանչյուրն ունի իր բացասական կողմերը: Մասնավորապես առաջին երկուսը անձակենտրոն չեն: Այսինքն, այս մեխանիզմների կիրառման ընթացքում որպես կենտրոնական դերակատարում և կարևորություն ունեցող դիտարկվում է ոչ թե այն անձը, ում անհրաժեշտ է աջակցություն, այլ շրջապատը: Եվ ավելին, նույնիսկ այն դեպքում, երբ մեխանիզմը կիրառվում է տվյալ անձի իրավունքների առավել արդյունավետ իրացման նպատակով, առաջնային են դիտարկվում անձի ենթադրյալ շահերը, այլ ոչ կարիքները, ցանկությունները, նախապատվությունները: Նման անձի ցանկությունները և նախապատվությունները անտեսվում են նաև անձի հանդեպ գերխնամքի արդյունքում:

Միևնույն ժամանակ պարզ չէ, թե ինչ մեխանիզմներից կարող են օգտվել այն անձինք, որոնք, գտնվելով ֆիզիկական ծանր վիճակում, հնարավորություն չունեն անձամբ իրացնել իրենց իրավունքները և կատարել պարտականությունները:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով էլ իր հերթին սահմանվել են (1) աջակցող ցանցերի, (2) սոցիալական պատրոնաժի ինստիտուտները, ինչպես նաև (3) անհատական սոցիալական ծրագրերի վարման անհրաժեշտությունը:

1) Աջակցող ցանցը սահմանվում է որպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխգործակցության, համատեղ գործունեության համակարգ՝ ուղղված անձանց, անձանց

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

որոշակի խմբերի և ընտանիքների իրավունքների պաշտպանությանն ու իրականացմանը, օրինական շահերի և ազատությունների ապահովմանը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրման միջոցով. (հոդված 2)

2) Սոցիալական պատրոնաժը հանդիսանում է հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում՝ աշխատանքի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պահանջների առկայության դեպքում սոցիալական պատրոնի (օգնականի) կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջություն. (հոդված 2)

3) Անհատական սոցիալական ծրագիրը՝ սոցիալական դեպքի վարման արդյունքներով կազմված ծրագիր է, որում ներառվում են սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տեսակներն իրենց տրամադրման ժամկետով, ակնկալվող արդյունքով, ինչպես նաև սոցիալական դեպքի շարունակական հսկողության ժամանակացույցը. (հոդված 2)

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն գործող պատրոնաժի ինստիտուտը այն մեխանիզմն է, որի միջոցով անձը կարող է իր իրավունքների իրականացումը և պարտավորությունների կատարումը դելեգացնել այլ, իրեն վստահելի անձի: Այս մեխանիզմը ընդունելով որպես հիմք, ամբողջությամբ և արդյունավետորեն ներդնելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վերոնշյալ մեխանիզմները և սահմանելով իրական և գործուն հասարակական, գերատեսչական և դատական pre factum և post factum վերահսկողության միջոցներ, հնարավոր է ներդնել նաև աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ:

Ընդ որում, հաշվի առնելով, որ աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմը ևս ենթադրում է անձի իրավունքների սահմանափակում, այն անհրաժեշտ է կիրառել միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է կոնկրետ տվյալ դեպքում:

անձի փոխարեն որոշումների կայացման մեխանիզմի կիրառման հնարավորությունը

<u>Առաջարկություն</u>

3. Ներդնել անձի փոխարեն որոշումների կայացման այնպիսի մեխանիզմ, որը չի ենթադրի անձի գործունակության վերացում կամ սահմանափակում, կկիրառվի որպես

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ծայրահեղ միջոց և կունենա բավարար ճկուն կարգավորումներ՝ անհատականացված սկզբունքով կիրառելու համար:

Հիմնավորում

Անձը հնարավոր է գտնվի այնպիսի իրավիճակում, երբ նա ընդհանրապես անկարող է որևէ կերպ արտահայտել իր կամքը կամ ցանկությունները: Տվյալ դեպքում հնարավոր է անհրաժեշտ լինի կիրառել անձի իրավունքներին առավել խորը միջամտություն ենթադրող միջոցներ: Նման միջոցները կարող են կիրառվել միայն ծայրահեղ դեպքերում՝ երբ միջամտության այլ եղանակները բացարձակապես օգտակար չեն կարող լինել տվյալ անձի համար: Եվ նույնիսկ այս դեպքերում անթույլատրելի պետք է լինի անձի գործունակության սահմանափակումը: Անձի փոխարեն որոշումների կայացման մեխանիզմի շրջանակներում իր հերթին անհրաժեշտ է կիրառել անձի ունակությունների և կարողությունների գնահատում, ինչի արդյունքում անձի իրավունքները կսահմանափակվեն միայն այն մասով և այն չափով, որքանով դա անհրաժեշտ կլինի այդ անձի և այլոց իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու տեսանկյունից: Իսկ անձի փոխարեն որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել անձի նախապատվությունները, հնարավոր միջոցներով անձի ցանկությունները բացահայտելու և վեր հանելու՝ իր կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս այդ ցանկությունները հաշվի առնելու նպատակով:

Անձի փոխարեն որոշումների կայացման մեխանիզմի կիրառումը կարող է ներդրվել միայն դատարանի կողմից, պետք է լինի թիրախավորված կոնկրետ իրավունքի և հարցի շրջանակներում, կրի ժամանակավոր բնույթ: Այս մեխանիզմի կիրառման ընթացքում ևս պետք է գործի անհատականացված մոտեցման և իրավունքները միայն անհրաժեշտ չափով սահմանափակելու սկզբունքը: Միևնույն ժամանակ այս մեխանիզմի կիրառումը ևս պետք է ենթարկվի գերատեսչական հսկողության, հասարակական և post factum դատական վերահսկողության:

կրթում և իրազեկվածության բարձրացում

Առաջարկություն

4. Աջակցության կարիք ունեցող անձանց իրավունքների արդյունավետ իրացման նպատակով պետական մարմինների և հասարակության մոտ իրազեկվածության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հանրային իրազեկման և կրթական ծրագրեր ինչպես պետական կառույցների աշխատակիցների, այնպես էլ ծառայություններից օգտվողների, իրենց հարազատների, հասարակության լայն շերտերի

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

համար: Առանձին կերպով անհրաժեշտ է շեշտադրել հոգեկան առողջության, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության բարձրացման և ներուժի զարգացումը:

գործողությունների ծրագրի անհրաժեշտություն

Առաջարկություն

5. Մշակել անգործունակության ինստիտուտի վերացման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագիր:

Հիմնավորում

Անձի փոխարեն որոշումների կայացման ներկայիս մեխանիզմից անցումը աջակցության միջոցով որոշումների կայացման համընդհանուր/ունիվերսալ մեխանիզմին արդյունավետորեն կարող է իրականացվել համակարգված կերպով բոլոր վերաբերելի ոլորտներում, բոլոր կառույցների կողմից (1) օրենսդրական, (2) կրթական և (3) ինստիտուցիոնալ միջոցառումների իրականացման արդյունքում:

Մեխանիզմի ներդրումը նախատեսում է միջոցառումների իրականացում արդարադատության, սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ոլորտներում:

1) Օրենսդրական փոփոխություններով և լրացումներով անհրաժեշտ է ամրագրել բարեփոխումների օրենսդրական կարգավորումները. վերացնել չափահաս անձի անգործունակության և խնամակալության ինստիտուտը, ամրագրել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի իրավական հիմքերը, մեխանիզմում ներգրավված կողմերի իրավունքները և պարտավորությունները, պատասխանատվության շրջանակը, աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի սահմանման և ընթացիկ կիրառման ընթացակարգերը:

Օրենսդրական կարգավորման անհրաժեշտ է ենթարկել նաև ներդրվող մեխանիզմի շրջանակներում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հանդեպ վերահսկողական լիազորությունների և իրավունքների շրջանակները:

Մասնավորապես, հասարակական վերահսկողության շրջանակներում անհրաժեշտ է սահմանել հասարակական կազմակերպությունների իրավունքը դիմել դատարան՝ առանձին խոցելի վիճակում գտնվող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով: Առանց հատուկ լիազորագրի Կազմակերպության կողմից մտավոր հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների ներկայացումը դատարանում

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից դիտարկվել է և ընդունելի է համարվել իրական և արդյունավետ, այլ ոչ տեսական և պատրանքային կերպով արդար դատաքննության իրավունքը երաշխավորելու անհրաժեշտության տեսանկյունից: (Case of Centre for Legal Resources on Behalf of Valentin Câmpeanu v. Romania12, Application no. 47848/08, 17 July 2014, § 105, 113)

Պետական վերահսկողության շրջանակներում անհրաժեշտ է սահմանել համապատասխան գերատեսչական լրջագույն և գործուն վերահսկողության մեխանիզմները՝ այն յուրաքանչյուր կառույցի կողմից, որի աշխատակիցները/ծառայողները ներգրավված են մեխանիզմում: Վերահսկողության կարևորագույն մեխանիզմներից պետք է հանդիսանա դատական վերահսկողությունը: Pre factum դատական վերահսկողության շրջանակներում անհրաժեշտ է սահմանել և գործնականում ապահովել միայն դատական կարգով անձի իրավունքների սահմանափակման սկզբունքը: Post factum դատական վերահսկողության շրջանակներում անհրաժեշտ է սահմանել դատարանի կողմից սահմանափակումների կիրառման հանդեպ հսկողություն, պարտադիր կերպով սահմանափակումների պարբերական վերանայում, ինչպես նաև վերանայում շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա:

2) Կրթական միջոցառումների շրջանակներում հիմնական շեշտը անհրաժեշտ է դնել հետևյալ խմբերի համար կրթական ծրագրերի մշակման վրա.

- աջակցության կարիք ունեցող անձանց,
- աջակցություն ցուցաբերող անձանց,
- ներգրավված գերատեսչությունների աշխատակիցների/ծառայողների,
- իրավական և իրավապահ համակարգում ներգրավված ծառայողների (դատավորներ, փաստաբաններ, ոստիկանության ծառայողներ, և այլն):

3) Ինստիտուցիոնալ միջոցառումների շրջանակներում անհրաժեշտ է նախատեսել ուղղորդման, բուն աջակցության ինստիտուտի և վերահսկողական կառուցակարգերի, կամ առկա կառուցակարգերի հարմարեցումը նաև տվյալ դեպքերի համար:

Մշակվող բոլոր կառուցակարգերի համար կարևոր նախապայման պետք է հանդիսանա մեխանիզմների համընդհանուր բնույթը՝ ունիվերսալությունը, անձանց հանդեպ ոչ խտրական վերաբերմունքի զարգացումը: Այսպես, ՀՀ ոստիկանության, մասնավորապես ՀՀ ոստիկանության համայնքային ծառայության շրջանակներում անհրաժեշտ է զարգացնել համայնքի բնակիչ հանդիսացող՝ խոցելի վիճակում գտնվող անձանց անվտանգության հանդեպ լրացուցիչ վերահսկողության միջոցներ: ՀՀ ոստիկանության ծառայության շրջանակներում պետք է գործնականում գործի խոցելի և

[12] http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-145577

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

աջակցության կարիք ունեցող անձանց համապատասխան ծառայություններ ուղղորդումը, ինչպես նաև նրանց պաշտպանության և անվտանգության հանդեպ մշտական վերահսկողություն իրականացնելու մեխանիզմները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է պատասխանատու լինի տվյալ անձանց սոցիալական ներառման, աշխատանքով ապահովման, մշտական և անհրաժեշտ կրթման և վերապատրաստման համար:

ՀՀ յուրաքանչյուր դատարանում անհրաժեշտ է ապահովել առնվազն մեկ դատավոր, ով մասնագիտացված կլինի խոցելի վիճակում գտնվող անձանց իրավունքների սահմանափակումների և աջակցող մեխանիզմների ներդրման հարցերի ոլորտում: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ նման վիճակում գտնվող անձինք կարող են ներգրավված լինեն նաև այլ վարույթներում, անհրաժեշտ է ապահովել բոլոր դատավորների և դատավորների օգնականների վերապատրաստումը նշված անձանց իրավունքների իրացման վերաբերյալ:

ՀՀ առողջապահության համակարգում ևս պետք է գործեն անձանց ուղղորդման մեխանիզմները:

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am